ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Որակի ապահովման վարչության փորձագետ Արուշան Ալթունյանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 2-ից մինչև 2025 թվականի մարտի 2-ը ընկած ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Հանդիսանալով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության փորձագետ՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. «Բուսական ծագման մթերքում մնացորդային նյութերի, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների առկայության մոնիթորինգային ծրագիրը հաստատելու մասին» Տեսչական մարմնի ղեկավարի 12 սեպտեմբերի 2024 թվականի N 2256-Ա հրամանի հիման վրա իրականացված մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ ստացված լաբորատոր փորձաքննությունների վերլուծություն,առաջարկությունների ներկայացում,

2. Տեսչական մարմնի ղեկավարի 2024 թվականի հունիսի 06-ի «Ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության պլանը հաստատելու և նմուշառում իրականացնելու մասին» N 1495-Ա հրամանի հիման վրա 2024 թվականին կառուցվածքային ստորաբաժանումների և ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում,

3. Տեսչական մարմնի ղեկավարի 2024 թվականի հունիսի 07-ի «Մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության պլանը հաստատելու և նմուշառում իրականացնելու մասին» N 1501-Ա հրամանի հիման վրա 2024 թվականին կառուցվածքային ստորաբաժանումների և ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքների վերլուծություն,առաջարկությունների ներկայացում,

4. Տեսչական մարմնի բուսասանիտարիայի վարչության կողմից 2024 թվականի ընթացքում իրականացված ստուգումների, դիտարկումների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում,

5. Տեսչական մարմնի ռիսկի գնահատման/կառավարման/ և վերլուծությունների վարչության կողմից 2024 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների ինչպես նաև վարչության

կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթների կատարման ուղղությամբ իրականացված աշխատանքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում,

6. Պետական վերահսկողության արդյունքների հավաքագրման և վերլուծության վերաբերյալ Տեսչական մարմնի Ն/7958-2023 հանձնարարականով Երևանի կենտրոնի և մարզային կենտրոնների կողմից 2024 թվականի իրականացված պետական վերհսկողական գործառույթների քանակական վերլուծություն՝ ներկայացվել է առաջարկություն առցանց հարթակում տնտեսվարողների վերաբերյալ լրացնել բացակայող տեղեկատվությունը, ինչպես նաև տարբեր պատճառներով չիրականացված պետական վերահսկողության միջոցառումներով արձակված հրամանները չեղյալ կամ ուժը կորցրած ճանաչել,

7. Ուսումնասիրվել է հաշվետու ժամանակահատվածում ՍԱՏՄ ղեկավարի կողմից ընդունված վարչական տուգանք նշանակելու, վարչական վարույթ հարուցելու և զննում իրականացնելու, արտադրական գործունեությունը կասեցնելու, արտադրական գործունեության կասեցումը վերացնելու որոշումները, անասնահամաճարակային մշտադիտարկում իրականացնելու մասին հրամանները (շուրջ 110 գործ), անհամապատասխանությունների, թերացումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ, ներկայացվել առաջարկություններ:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ՝

Ա. ԱԼԹՈՒՆՅԱՆ